**«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ**

**Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվություններ 2022թ. համար**

**Բովանդակություն**

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ
համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 3

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ համախմբված հաշվետվություն 5

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի
մասին ամփոփ համախմբված հաշվետվություն 6

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին
ամփոփ համախմբված հաշվետվություն 7

Դրամական հոսքերի մասին ամփոփ համախմբված հաշվետվություն 8

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվություններին
կից ծանոթագրություն 9

KPMG

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

# Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

**«ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի բաժնետերերին և Տնօրենների խորհրդին**

## Կարծիք

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունն առ 31 դեկտեմբերի 2022թ., հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունները և համապատասխան ծանոթագրությունը, պատրաստվել են «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի («Ընկերություն») և վերջինիս դուստր ընկերությունների («Խումբ») 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններին՝ Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

## Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտումները: Հետևաբար, ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացության ընթերցումը չի փոխարինում աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացության ընթերցմանը:

## Աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունները և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք արտահայտել ենք չձևափոխված կարծիք աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ 2023թ. մայիսի 12-ի մեր աուդիտորական եզրակացությունում:

Աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունը ներառում է նաև *«Էական անորոշություն գործունեության անընդհատության հետ կապված»* բաժինը, որը ուշադրություն է հրավիրում աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 2-ի (ա) կետին, որտեղ նշվում է, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանը Զոդի հանքավայրի մերձակայքում երբեք պաշտոնապես որոշված չի եղել, և որ սահմանին իրավիճակը անկայուն է:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ

Ինչպես նշվում է աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 2-ի (ա) կետում, այս հանգամանքները վկայում են էական անորոշության առկայության մասին, որը կարող է նշանակալի կասկածներ հարուցել անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու Խմբի կարողության վերաբերյալ: Աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի ձևափոխվել այս հարցի հետ կապված:

## Ղեկավարության պատասխանատվությունն ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել, թե արդյոք ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններին՝ հիմք ընդունելով մեր ընթացակարգերը, որոնք իրականացվել են Աուդիտի միջազգային ստանդարտ 810 (վերանայված) *«Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ»* պահանջների համաձայն:

Իրինա Գևորգյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
12 մայիսի 2023թ.

# Ֆինանսական վիճակի մասին ամփոփ համախմբված հաշվետվություն առ 31 դեկտեմբերի 2022թ.

| **հազ. դրամ** | **31 դեկտեմբերի 2022թ.** | **31 դեկտեմբերի 2021թ.** |
|---|---|---|
| **Ակտիվներ** | | |
| Հիմնական միջոցներ | 44,765,577 | 50,765,235 |
| Հանքարդյունաբերական գույք | 26,150,653 | 60,311,834 |
| Կանխավճարներ | 688,076 | 181,413 |
| Տրամադրված փոխառություններ | 8,046,347 | - |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | **79,650,653** | **111,258,482** |
| | | |
| Պաշարներ | 12,883,551 | 14,081,804 |
| Բյուջեից ստացվելիք ռոյալթի | 1,375,933 | 7,420,871 |
| Ընթացիկ հարկային ակտիվներ | 1,073,924 | 684,299 |
| Տրամադրված փոխառություններ | 261,802 | - |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 5,884,332 | 791,828 |
| Կանխավճարներ | 1,224,897 | 830,590 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 335,119 | 137,078 |
| **Ընթացիկ ակտիվներ** | **23,039,558** | **23,946,470** |
| **Ընդամենը ակտիվներ** | **102,690,211** | **135,204,952** |
| | | |
| **Սեփական կապիտալ** | | |
| Կանոնադրական կապիտալ | 23,643,022 | 23,643,022 |
| Լրացուցիչ կապիտալ | 2,806,664 | 2,806,664 |
| Վերագնահատումից աճ | 50,646,320 | 69,239,381 |
| Կուտակված վնաս | (37,259,667) | (36,708,637) |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | **39,836,339** | **58,980,430** |
| | | |
| **Պարտավորություններ** | | |
| Վարկեր և փոխառություններ | 3,222,773 | - |
| Տեղանքի վերականգնման գծով պահուստ | 4,317,576 | 5,914,001 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 3,554,839 | 13,283,373 |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | **11,095,188** | **19,197,374** |
| | | |
| Վարկեր և փոխառություններ | 26,474,558 | 47,854,038 |
| Այլ պարտավորություններ | 17,014,856 | - |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 8,269,270 | 9,173,110 |
| **Ընթացիկ պարտավորություններ** | **51,758,684** | **57,027,148** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **62,853,872** | **76,224,522** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | **102,690,211** | **135,204,952** |



Ֆինանսական վիճակի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ համախմբված հաշվետվություն 2022թ. համար

| **հազ. դրամ** | **2022թ.** | **2021թ.** |
|---|---|---|
| Հասույթ | 61,847,055 | 59,774,630 |
| Վաճառքի ինքնարժեք | (58,710,435) | (42,640,237) |
| **Համախառն շահույթ** | **3,136,620** | **17,134,393** |
| Այլ եկամուտ | 406,528 | 375,949 |
| Իրացման ծախսեր | (496,471) | (359,522) |
| Վարչական ծախսեր | (6,651,792) | (6,081,110) |
| Այլ ծախսեր | (5,086,458) | (6,550,817) |
| **Գործառնական գործունեության արդյունքներ** | **(8,691,573)** | **4,518,893** |
| Ֆինանսական եկամուտ | 9,489,534 | 4,728,526 |
| Ֆինանսական ծախսեր | (2,604,114) | (2,519,271) |
| **Զուտ ֆինանսական եկամուտ** | **6,885,420** | **2,209,255** |
| **(Վնաս)/շահույթ մինչև շահութահարկով հարկումը** | **(1,806,153)** | **6,728,148** |
| Շահութահարկի գծով օգուտ/(ծախս) | 1,255,123 | (856,384) |
| **(Վնաս)/շահույթ տարվա համար** | **(551,030)** | **5,871,764** |
| | | |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | | |
| ***Հոդվածներ, որոնք երբեք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս*** | | |
| Հանքարդյունաբերական գույքի վերագնահատում | (25,913,674) | 26,130,990 |
| Հարակից հարկի գծով օգուտ/(շահութահարկ) | 7,320,613 | (7,382,004) |
| **Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ՝ առանց շահութահարկի** | **(18,593,061)** | **18,748,986** |
| **Ընդամենը համապարփակ (վնաս)/եկամուտ տարվա համար** | **(19,144,091)** | **24,620,750** |

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2023թ. մայիսի 12-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Անատոլի Գողոսին
Գլխավոր տնօրեն

Արթուր Մարտիրոսյան
Գլխավոր հաշվապահ



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ համախմբված հաշվետվություն 2022թ. համար

| հազ. դրամ | Կանոնադրական կապիտալ | Լրացուցիչ կապիտալ | Վերագնահա-տումից աճ | Կուտակված վնաս | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|---|
| Մնացորդը առ 1 հունվարի 2021թ. | 23,643,022 | 2,806,664 | 50,490,395 | (42,580,401) | 34,359,680 |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ** | | | | | |
| Շահույթ տարվա համար | - | - | - | 5,871,764 | 5,871,764 |
| **Այլ համապարփակ եկամուտ** | | | | | |
| Հանքարդյունաբերական գույքի վերագնահատում | - | - | 18,664,531 | - | 18,664,531 |
| Հանքարդյունաբերական գույքի վերագնահատումից աճի ավելացում՝ պայմանավորված տեղանքի վերականգնման գծով պահուստի փոփոխությամբ | - | - | 84,455 | - | 84,455 |
| **Ընդամենը այլ համապարփակ եկամուտ** | **-** | **-** | **18,748,986** | **-** | **18,748,986** |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | **-** | **-** | **18,748,986** | **5,871,764** | **24,620,750** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **23,643,022** | **2,806,664** | **69,239,381** | **(36,708,637)** | **58,980,430** |
| | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2022թ. | 23,643,022 | 2,806,664 | 69,239,381 | (36,708,637) | 58,980,430 |
| **Ընդամենը համապարփակ վնաս** | | | | | |
| Վնաս տարվա համար | - | - | - | (551,030) | (551,030) |
| **Այլ համապարփակ վնաս** | | | | | |
| Հանքարդյունաբերական գույքի վերագնահատում | - | - | (18,882,266) | - | (18,882,266) |
| Հանքարդյունաբերական գույքի վերագնահատումից աճի ավելացում՝ պայմանավորված տեղանքի վերականգնման գծով պահուստի փոփոխությամբ | - | - | 289,205 | - | 289,205 |
| **Ընդամենը այլ համապարփակ վնաս** | **-** | **-** | **(18,593,061)** | **-** | **(18,593,061)** |
| **Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար** | **-** | **-** | **(18,593,061)** | **(551,030)** | **(19,144,091)** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.** | **23,643,022** | **2,806,664** | **50,646,320** | **(37,259,667)** | **39,836,339** |



Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

# Դրամական հոսքերի մասին ամփոփ համախմբված հաշվետվություն 2022թ. համար

| **հազ. դրամ** | **2022թ.** | **2021թ.** |
|---|---|---|
| **Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից** | | |
| (Վնաս)/շահույթ տարվա համար | (551,030) | 5,871,764 |
| *Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով.* | | |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 22,514,038 | 20,981,830 |
| Դուրսգրումներ և արժեզրկումից կորուստներ | 992,950 | 544,205 |
| Ռոյալթիի գծով ծախս | 2,414,539 | 2,376,034 |
| Զուտ ֆինանսական եկամուտ | (6,885,420) | (2,209,255) |
| Շահութահարկի գծով ծախս | (1,255,123) | 856,384 |
| | **17,229,954** | **28,420,962** |
| *Փոփոխություններ հետևյալ հոդվածներում.* | | |
| Պաշարներ | (332,458) | (328,013) |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | (2,143,038) | 489,348 |
| Կանխավճարներ ակտիվների համար | (518,699) | 576,689 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | (625,955) | 415,599 |
| **Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր՝ մինչև շահութահարկի և տոկոսների վճարումը** | **13,609,804** | **29,574,585** |
| Ստացված/(վճարված) շահութահարկ և ռոյալթի | 2,087,976 | (13,990,917) |
| Վճարված տոկոսներ | (7,449,099) | (358,682) |
| **Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ** | **8,248,681** | **15,224,986** |
| | | |
| **Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից** | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | (3,770,578) | (2,573,565) |
| Հիմնական միջոցներ վերադասակարգված պաշարների ձեռքբերում | (3,063,587) | (1,253,764) |
| Հանքարդյունաբերական գույքի ձեռքբերում | (2,966,411) | (8,100,080) |
| Ընթացիկ ակտիվների ձեռքբերման և փոխանցման համար վճարված կանխավճարներ | (4,222,278) | - |
| Վճարումներ վերականգնման աշխատանքների համար | (58,958) | - |
| Տրամադրված փոխառություններ | (40,499,243) | - |
| Տրամադրված փոխառությունների մարում | 29,927,990 | - |
| **Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ** | **(24,653,065)** | **(11,927,409)** |
| | | |
| **Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | |
| Մուտքեր փոխառություններից | 35,518,720 | 15,393,631 |
| Փոխառությունների մարում | (41,403,897) | (18,838,825) |
| Մուտքեր այլ պարտավորություններից | 25,889,249 | - |
| **Ֆինանսավորման գործունեությունից ստացված/ ֆինանսավորման գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցներ** | **20,004,072** | **(3,445,194)** |
| | | |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)** | **3,599,688** | **(147,617)** |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի | 137,078 | 405,283 |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (3,401,647) | (120,588) |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի** | **335,119** | **137,078** |



Դրամական հոսքերի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրության հետ մեկտեղ:

# 1. Պատրաստման հիմունքներ

Այս ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի («Ընկերություն») և վերջինիս դուստր ընկերությունների («Խումբ») Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ ստորագրված 2023թ. մայիսի 12-ին: Այս ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են միայն ֆինանսական վիճակի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ. և հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունները, որոնք վերցվել են աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների 6-ից 9-րդ էջերից՝ առանց որևէ փոփոխության: Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացված բացահայտումները: Խմբի աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունները կարող են տրամադրվել ըստ պահանջի Ընկերության գրասենյակից (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Իսրայելյան փ. 39/2):